ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 2.
Հեռ.(011) 52-19-64.Ֆաքս (011) 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

N01/19.1/3903-15
23.07.15թ.

«Ա.Դ. ՍԱԽԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Ձեր 16.07.2015թ. N2327
գրության կապակցությամբ

Հարգելի պարոն Ներսիսյան

Ձեր 16.07.2015թ. N2327 գրության 2-րդ կետով բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնում ենք.

1-ի ենթակետի վերաբերյալ

Նախ, հասկանալի չէ, թե ինչ «ստանդարտի» մասին է խոսքը, ըստ որի իրացվող էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստները «պետք է լինեն ոչ ավելի, քան 5-6 տոկոս»:

Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման ցանցերում առկա կորուստների մակարդակների ուսումնասիրության, շեղումների պատճառների բացահայտման նպատակով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ: Աշխատանքային խումբը շուրջ 6 ամսվա ընթացքում համագործակցելով համակարգի բոլոր ընկերությունների ղեկավարների և մասնագետների հետ՝ ուսումնասիրեց արտադրող կայաններում, բարձրավոլտ ցանցում և բաշխիչ ցանցում էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգում կորուստների առաջացման պատճառները, դրանց կառուցվածքը, տեղեկատվության հավաստիությունը և դրա հասանելիությունը շուկայի մասնակիցների համար:

Քննարկումների արդյունքներով նախապատրաստվել է Առաջարկություններ՝ ուղղված ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգի բարելավմանը, ներդրումների արդյունավետությանը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, էլեկտրաէներգետիկայի հաշվառման համակարգի արդիականացմանը և կորուստների նվազեցմանը:

Առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարություն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին: Առաջարկությունների միջոցառումների հիմքով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ–ն հաստատել է իր 2015-2018թթ էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական և առևտրային կորուստների նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը: Նախատեսված միջոցառումների իրականացումը կապահովի կորուստների կրճատում՝ 1,5-2 տոկոսով:

2-րդ ենթակետի վերաբերյալ

Ս.թ. հունիսի 25-26-ը ք. Երևանում տեղի ունեցած հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 16-րդ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության շրջանակներում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ՌԴ էներգետիկայի նախարարություն է ներկայացվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում աուդիտի անցկացման տեխնիկական առաջադրանքը: Ներկայումս այն քննարկման փուլում է: Աուդիտը կտա այն բոլոր հարցերի պատասխանները, որոնք վերաբերվում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում ստեղծված ֆինանսական ծանր վիճակին:

3-րդ ենթակետի վերաբերյալ

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը գրությամբ դիմել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին այս ենթակետով բարձրացված հարցի վերաբերյալ դիրքորոշում ստանալու համար, որը և լրացուցիչ կներկայացվի Ձեզ:

4-րդ ենթակետի վերաբերյալ

Դա վերաբերվում է մատակարար-բաժանորդ պայմանագրային փոխհարաբերություններին: Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի՝ պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով հասցված վնասը փոխհատուցվում է խախտողի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: Պայմանագրի կատարման հսկողությունն իրականացնում են միայն պայմանագրային կողմերը:

Միևնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններ»-ի 12-րդ կետի՝ մատակարարի և սպառողի միջև ծագած վեճերը լուծվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջոցով կամ դատական կարգով:

5-րդ ենթակետի վերաբերյալ

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 05.05.2015թ. N138-Ն հրամանով հաստատվել է էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ներկրման, արտահանման և բաշխողի էլեկտրական ցանցեր առաքման կանխատեսվող հաշվեկշռի կազմման կարգը, որը թույլ է տալիս կազմել առավել իրատեսական էներգահաշվեկշիռ և խուսափել հետագա շեղումներից ու վնասների առաջացումից: Նշված կարգի հիման վրա կազմվող էներգահաշվեկշիռները հիմք են վերցվելու էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկներում:

6-րդ ենթակետի վերաբերյալ

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը հետևողական է էլեկտրաէներգետիկական համակարգի շուկայի մասնակից՝ պետական բաժնեմասով ընկերություններում ֆինանսական կարգապահության և խնայողության ռեժիմի պահպանմանը և իրեն տրված լիազորությունների շրջանակներում մշտապես ուշադրության կենտրոնում է պահում այդ ընկերություններում նախահաշիվներով նախատեսված ծախսերի աճ թույլ չտալու համար:

Հարգանքով՝ ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ

Կատարող՝ Մ. Գրիգորյան
Հեռ. (011) 52-65-73